# Ազդարարության փող

# Trumpet's Sound

52-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԿ
ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021



# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
# ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերադարձրո՛ւ ինձ իմ մանկության Սուրբ Ծնունդը ..... Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Եգիպտոսից Քանան (2) ..... Դոն Սթորմըր

Տկարների տկարությունը վերցնել ..... Ռեքս Տիրլավ

Մի՞թե Աստծո մոտ անարդարություն կա ..... Քաղված

Փողերի դատաստանները (3) ..... QMBC պանորամա

Ինչո՞ւ ..... Նեյլ Բուքման

Եվս մեկ տարի ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Հարուստ մեռնել ցանկացող նավաստին ..... Քաղված

Տե՛ր, Դու ամեն բան գիտես ..... Վարդան Սարգիսյան

Կարող ես քնել, երբ քամին փչում է ..... Քաղված

«ACM»-ի միսիոներական խումբը Հայաստանում ..... Խմբագրական

# Վերադարձրո՛ւ ինձ իմ մանկության Սուրբ Ծնունդը

Ժամանակ առ ժամանակ լսում ենք, թե Սուրբ Ծնունդն այլևս նույնը չէ, և ետ ենք նայում՝ հասկանալու, թե արդյոք կարո՞ղ ենք պարզել, թե ինչն է պակասում: Արդյոք լույսե՞րը, նվերնե՞րը, թե՞ Ձմեռ պապը: Այնուամենայնիվ, մենք ունենք այդ ամենը: Մեզ պակասում է սուրբծննդյան հոգին:

Սուրբ Ծնունդը ինչպե՞ս կարող է նույնը լինել, եթե չենք երգում Հիսուսին արտացոլող օրհներգերը, եթե չենք ցուցադրում Հիսուսի ծննդյան տեսարանը, եթե Նրան երկրպագելու համար չենք հաճախում եկեղեցի, եթե մեզ թույլ չեն տալիս խոսել Նրա մասին՝ որպես Մեկի, ով աշխարհ եկավ մեղավորներին փրկելու համար: Եթե Քրիստոսին հանում ենք Սուրբ Ծնունդի տոնակատարությունից, ապա արդեն ի՞նչ իմաստ ունի ընդհանրապես Սուրբ Ծնունդը տոնելը: Իսկ ինչո՞ւ ենք զարմանում՝ կարծելով, թե սուրբծննդյան հոգին մեռած է:

Ո՛չ, սուրբծննդյան հոգին կենդանի է յուրաքանչյուր հավատացյալի և յուրաքանչյուր եկեղեցու մեջ, որոնք մեկտեղվում են՝ Փրկչին երկրպագելու համար, ում մասին հռչակեցին հրեշտակները, ում մասին ավետիսը տարածեցին հովիվները, և ում նվերներ ընծայեցին մոգերը:

«Հրեշտակն ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, որովհետև, ահա մեծ ուրախություն եմ ավետում ձեզ, որ ամբողջ ժողովրդին պիտի լինի: Որովհետև այսօր ձեզ համար Փրկիչ ծնվեց Դավթի քաղաքում, որը՝ Քրիստոս Տերն է: Եվ սա՛ ձեզ համար նշան կլինի. Մանուկին կգտնեք խանձարուրով պատված և մսուրում պառկած»» (Ղուկ. 2:10-12):

Այս հոգին Աստծո պարգևն է ողջ մարդկությանը: Դուք նույնպես կարող եք ստանալ այս պարգևը, եթե ապաշխարությամբ գաք Փրկիչ Հիսուսի մոտ՝ ասելով. «Տե՛ր Հիսուս, Քեզ մոտ եմ գալիս որպես կորած մեղավոր, օգնի՛ր ինձ, փոխի՛ր ինձ, վերադարձրո՛ւ ինձ իմ ուրախությունը, օրհնի՛ր ինձ Քո Հոգով և կենդանացրո՛ւ ինձ»:

Եվ բոլոր նրանք, ովքեր եկան Նրա մոտ, ստացան նոր կյանք, նոր հույս և հավիտենականություն Երկնքում:

Թող սուրբծննդյան հոգին լցնի՛ ձեր սիրտը ուրախությամբ և ցընծությամբ:

«ACM»-ի և «Ազդարարության փող» թերթի անձնակազմի կողմից մաղթում ենք բոլորիդ օրհնյալ Սուրբ Ծնունդ:

Հ. Գ.

# Եգիպտոսից Քանան (2)

## Մովսեսը՝ պատրաստված Աստծո կողմից

Մովսեսի պատմությունը սկսվում է այն բանից հետո, երբ Եգիպտոսի փարավոնը մտահոգվում է հրեա բնակչության քանակի աճով: Նա վախենում էր՝ մտածելով, որ եթե պատերազմ սկսվի, իսրայելացիները կմիանան իր թշնամիներին ու կհեռանան երկրից: Մեզ ոչինչ չի հուշում, թե ինչու նա այդպես մտածեց: Եթե նա մտածում էր,որ նրանք թաքուն թշնամիներ են և ամենայն հավանականությամբ իր դեմ դուրս կգան, ապա ինչո՞ւ չհեռացրեց նրանց, քանի դեռ խնդիրներ չէին ստեղծել: Եթե նա ուզում էր նրանց պահել երկրում, ապա ինչո՞ւ նրանց չտվեց որոշ արտոնություններ՝ խրախուսելով նրանց միահյուսվելն ընկերային կառուցվածքի մեջ: Այնուամենայնիվ, ինչպես տեսանք, Աստված ուներ Իր ծրագիրը և կարողացավ օգտագործել Եգիպտոսի տիրակալի անմտությունը Իր նպատակներն իրականացնելու համար:

Ի պատասխան իր ընկալած դժվարությանը՝ փարավոնը ստրուկ դարձրեց իսրայելացիներին: Նա ստիպեց նրանց կառուցել իր համար շտեմարան-քաղաքներ՝ Փիթոմը ու Ռամսեսը: Սակայն իր ծրագիրը հաջողություն չունեցավ, քանի որ որքան իսրայելացիներին տանջեց, այնքան նրանց թիվը շատացավ: Բնակչությանը վերահսկելու այլ փորձեր ևս տեղի ունեցան: Փարավոնը պատվիրեց մանկաբարձներին մանկասպանություն գործել, որպեսզի նրանք նորածին տղանե-

րին սպանեն ծննդաբերության ժամանակ: Մանկաբարձները, վախենալով Տիրոջից, չհնազանդվեցին թագավորի հրամանին: Ուստի նա հրամայեց, որ բոլոր տղաներին գետը նետեն:

Մովսեսը ծնվեց ստրուկների ընտանիքում, ինչը ճշմարիտ էր բոլոր իսրայելացիների համար: Մենք գիտենք, որ նրա ծնողներն աստվածապաշտ էին, նրանք այնպիսի մարդիկ էին, ինչպիսին նկարագրում է եբրայեցիների հեղինակը՝ ասելով, որ նրանք չվախեցան թագավորի հրամանից: Ուստի Հոքաբեդը՝ Մովսեսի մայրը, արեց այն, ինչ յուրաքանչյուր մայր կցանկանար անել: Նա երեխային 3 ամիս ապահով պահեց: Նա տեսավ, որ զավակը խելացի է և իր աստվածապաշտության ու թագավորի հրամանից չվախենալու շնորհիվ առաջնորդվեց՝ իր որդուն փրկելու այդ ոճիրից:

Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը շեշտը դնում է Մովսեսի ծնողների հավատքի վրա, երբ Մովսեսը պետք է ծնվեր: Երեք ամիս անց Հոքաբեդը պատրաստեց անջրանցիկ զամբյուղ, որի մեջ տեղավորեց Մովսեսին նախքան նրան Նեղոս գետի մեջ դնելը: Այնտեղ Մովսեսին փրկեց թագավորի աղջիկը, և նա մեծանալով դարձավ Եգիպտոսի իշխան:

Հետաքրքրական է տեսնել Աստծո նախախնամությունը: Փարավոնի ընտանիքի անդամներից ինչ-որ մեկը պետք է դառնար Մովսեսի փրկության միջոցը: Քանի որ Մովսեսի քույրը՝ Մարիամը, հեռվում կանգնած հետևում էր ընթացքին, տեսավ, թե ինչպես փարավոնի աղջիկը եկավ՝ գետի մեջ լվացվելու: Հավանաբար նա հասկացավ, որ արքայադուստրը մտադիր էր պահել երեխային, ուստի առաջարկեց եբրայեցիներից ծիծ տվող կին գտնել՝ երեխային կերակրելու համար:

Այսպես Մովսեսն իր մանկության տարիներն անցկացրեց իր ծնողների հետ: Աստվածապաշտ կին լինելով՝ Մովսեսի մայրը նրան սովորեցրեց Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծո մասին: Ուստի Մովսեսը գիտեր, որ ստրկացած ազգը իր մարմինն ու արյունն էր:

## Մովսեսը՝ 40 տարեկան

Եգիպտոսում Մովսեսն ապրեց որպես արքայազն մինչև իր 40 տա-

րեկան դառնալը: Այնուհետև որոշեց օգնել իր հայրենակից իսրայելացիներին: Նա դուրս եկավ՝ տեսնելու, թե ինչպես են ապրում հայրենակիցները: Եվ երբ տեսավ, որ եգիպտացին վատ է վարվում մի եբրայեցու հետ, սպանեց եգիպտացուն ու նրան թաղեց ավազի մեջ: Ստեփանոսը (Գործք 7:23-25) պատմում է մեզ, թե ինչ էր մտածում Մովսեսը: Նրա սրտում փափագ արթնացավ իր եղբայրներին այցելելու: Երբ տեսավ, որ եբրայեցին անարդարացիորեն չարչարվում էր, պաշտպանեց նրան ու վրեժխնդիր եղավ՝ սպանելով եգիպտացի կեղեքիչին: Նա խորապես համոզված էր, որ Աստված իր ձեռքով ազատելու էր իսրայելացիներին, և ենթադրում էր, որ եբրայեցիները պետք է հասկանային սա:

Ե՛վ Մովսեսը Ելից գրքում, և՛ Ստեփանոսը Գործք Առաքելոց 7-րդ գլխում պատմում են մեզ, թե Մովսեսը ինչպիսի արձագանք ստացավ երկրորդ օրը: Այս անգամ նա տեսավ երկու եբրայեցիների, որոնք կռվում էին իրար հետ, և հարցրեց նրանց կռվի պատճառը: Սխալված մարդը հարցրեց Մովսեսին, թե իրեն ո՞վ իշխան ու դատավոր կարգեց իրենց վրա: Մովսեսին՝ որպես ազատագրողի ընդունելու փոխարեն նրանք նախատեցին նրան: Մովսեսը հասկացավ, որ ամեն ինչ իր գծած ծրագրով չի ընթանա: Ժամանակավորապես վախը տիրեց նրան, և սեփական կյանքը ազատելու համար փախչեց Մադիամ:

## Մովսեսի մեթոդները

Արդյոք Մովսեսն արդեն գիտե՞ր, որ Աստված իրեն ընտրել էր հատուկ առաջադրանքի համար: Մենք կարող ենք միայն ենթադրել Գործք 7:25-ում գրվածից, որ նրա եղբայրները գիտակցեցին, որ Աստված իրենց ազատելու էր ստրկությունից: Մովսեսը ինչ-որ բան գիտեր Աստծո ծրագրի մասին: Նա գիտեր, թե ինչպես էր հայտնվել փարավոնի պալատ, և գիտեր, որ ինքը տարբերվում էր պալատի մյուս բնակիչներից:

Բացի այն համոզումից, որ Աստված իրեն կանչել էր իսրայելացիներին ազատելու համար, նա, ըստ երևույթին, արդարության (կամ անարդարության) խոր զգացում ուներ: Նա տեսավ անարդարությունը և սպանեց մեղավորին:

Այնուամենայնիվ, սա հարց է առաջացնում մեր մեջ. արդյոք նա գործեց իր մարդկայի՞ն ուժով մինչև Աստծո նշանակած ժամանակը: Սա շատերիս խնդիրն է: Մենք պետք է գիտակցենք, որ Աստծո գործը պետք է կատարվի Աստծո ժամանակին և Աստծո ճանապարհով: Մնացած ցանկացած բան պիտի ձախողվի:

Մովսեսի մտածելակերպի մեջ կա ևս մեկ գործոն, որը քննարկում է Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը: Եբր. 11:24-26-ում կարդում ենք հետևյալը. «Հավատով, երբ Մովսեսը մեծացավ, չկամեցավ Փարավոնի աղջկա որդին կոչվել, ավելի լավ համարելով Աստծո ժողովրդի հետ չարչարվել, քան կարճ ժամանակի համար մեղքի հաճույքները վայելել, Քրիստոսի նախատինքն ավելի մեծ հարստություն համարելով, քան Եգիպտոսի գանձերը. որովհետև վարձատրությանն էր սպասում»: Երկրային պարգևների փոխարեն նա անհամբեր սպասում էր երկնայիններին:

Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը շարունակում է՝ ասելով. «Հավատով նա Եգիպտոսը թողեց, չվախենալով թագավորի բարկությունից, Անտեսանելուն տեսնողի պես համբերեց»: Եբր. 11-րդ գլխում այս համարի տեղադրումը հարց է առաջացնում: Հեղինակը Մովսեսի՝ Եգիպտոսից հեռանալը նշում է նախքան Զատիկի մասին խոսելը: Եթե Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը ժամանակագրական կարգով էր գրում, ուրեմն սա նշանակում է, որ Մովսեսը հավաքել էր իր ուժերը, իր սկզբնական վախը մեկ կողմ էր դրել ու հեռացել էր Եգիպտոսից՝ վստահելով Աստծուն, որ կպահպանի իրեն:

Ի՞նչ կարող ենք սովորել Մովսեսի մեթոդներից: Նա գիտեր, որ Աստված ծրագիր էր պատրաստել իսրայելացիներին գերությունից ազատելու համար, և որ ինքը այդ ծրագրի մի մասն էր: Այնուամենայնիվ, նա գործեց Աստծո ժամանակից առաջ և ոչ թե Աստծո ճանապարհով: Ուստի չկարողացավ շարունակել իր ծրագիրը և ստիպված էր սպասել Աստծո ժամանակին:

## Մովսեսը Մադիամում

Մովսեսին անհրաժեշտ էր ժամանակ անցկացնել Մադիամում: Ինչո՞ւ: Քանի որ նա 40 տարի ապրել էր պալատական շքեղության մեջ:

Նա տեղյակ չէր, թե ինչպես են ապրում հասարակ իսրայելացիները: Նրան ժամանակ էր պետք ծառայել սովորելու համար: Եթե նա պալատի շքեղությունը թողնելու էր՝ հազարավոր մարդկանց (նրանց հոտերն ու նախիրները ևս) անապատի միջով անցկացնելու համար, նա պետք է հասկանար անապատային կյանքի խնդիրները: 40 տարիները Մադիամում լիովին պատրաստեցին Մովսեսին իր առաջադրանքի համար:

Մովսեսը ժամանակ ունեցավ՝ մտածելու կյանքի նպատակի մասին: Նա նաև սովորեց սեփական սահմանափակումներին, երբ հակադրվեց անապատի դաժան բնությանը: 40 տարիները այդ միջավայրում նույնպես կատարյալ մարզում էին այն 40 տարիների համար, որոնք նա անցկացրեց՝ անապատում առաջնորդելով իսրայելացիներին:

Այնուամենայնիվ, Մովսեսը լիովին պատրաստ չէր Աստծո կանչին, երբ այն գար: Հավանաբար 40 տարի առաջ իր չմտածված պահվածքի պատճառով արդարացումներ էր փնտրում՝ խուսափելով անել այն, ինչի համար Աստված կանչում էր իրեն:

Դոն Սթորմըր

(Շարունակելի)

## Տկարների տկարությունը վերցնել

### Հռոմ. 15

Տատիկս հիանալի խոհարար էր: Նրա գլուխգործոցներից մեկը փափուկ քեյքսն էր: Երբեմն երբ ինչ-որ մեկը ճաշակում էր նրա առասպելական քեյքսը, հաճախ հարցնում էր. «Ի՞նչ բաղադրատոմս եք օգտագործում»: Տատիկս, փոքր-ինչ ահաբեկված, ասում էր. «Ես բաղադրատոմս չեմ օգտագործում, այլ ընդամենը երկու բուռ ալյուր, մի պտղունց աղ, մի քիչ սրանից, մի քիչ նրանից եմ օգտագործում: Այս ամբողջը միասին խառնում եմ, ու ամեն անգամ այսպիսի քեյքս է ստացվում: Այնքան հեշտ է, որ յուրաքանչյուր ոք կարող է պատ-

բաստել»: Ահա թե որտեղ էր նրա սխալը: Պարզապես յուրաքանչյուր ոք չէր կարող այդպես անել, համենայն դեպս ոչ այնպես, ինչպես կարող էր ինքը: Նա պարզապես չէր պատկերացնում, որ քեյքս պատրաստելու համար ինչ-որ մեկը բաղադրատոմսի հետևելու կարիք կունենա: Մարդկանց մոտ խնդիր կա, երբ ինչ-որ բանի մեջ հմուտ են: Նրանք չեն կարողանում պատկերացնել, թե ինչպիսին կլինի, եթե այդ հատուկ հմտությունը կամ ուժը չունենա: Հավանաբար բոլորս էլ ունեցել ենք այդ զգացումը, երբ տեսել ենք, որ ինչ-որ մեկը պայքարում է մի բան անել, որը մեզ համար շատ հեշտ է:

Պատկերացրե՛ք մի մայրիկի, որը քաղաքում շրջում էր խանութներով իր չորս տարեկան տղայի հետ: Նա շատ անելիքներ ուներ և փորձում էր այդ բոլորը հասցնել: Տղան դանդաղ էր քայլում: Մայրը բռնեց նրա ձեռքը: Նա մոռացավ, որ փոքրիկը արդեն ոչ թե քայլում, այլ վազում է: Մայրը չէր մտածում, որ իր յուրաքանչյուր քայլի համար տղան իր կարճ ոտքերով պետք է երկու քայլ կատարեր: Նա մոռացել էր, թե ինչ է նշանակում մանուկ լինել, ով չի կարողանում այդքան արագ քայլել:

«Ուստի մենք, որ հավատի մեջ ուժեղ ենք, պետք է թույլերի տկարությունը կրենք, և ոչ թե մենք մեզ հաճեցնենք» (հմր 1): Սա այնքան հիմնարար սկզբունք է, որը նույնիսկ ընդունված է բիզնեսի ոլորտում: Ընկերություններն իրենց աշխատակիցներին այս սկզբունքը սովորեցնելու համար ուղարկում են արկածային դասընթացների այնպիսի վայրեր, ինչպիսին է օրինակ՝ Ռուաբեհու լեռը (Նոր Զելանդիա): Լեռը բարձրանալու ժամանակ, երբ հասնում են դժվարանցանելի մի ժայռի, արդյոք ուժեղ լեռնագնացները պարզապես շարունակո՞ւմ են բարձրանալը՝ հետևում թողնելով խմբի ավելի տկար անդամներին: Իհարկե, ո՛չ. նրանք բարձրանում են ժայռը և այնտեղ մնում են՝ օգնելու մյուսներին: Խմբին տրված է առաջադրանք, այն է՝ բարձրանալ գագաթը: Առաջադրանքը կատարված չի համարվում, եթե ոմանք հաջողության չեն հասնում: Ուժեղներն օգտագործում են իրենց ուժը, որպեսզի օգնեն ու քաջալերեն տկարներին:

Ի՞նչ է նշանակում տկարների տկարությունը վերցնել կամ կրել: Եկե՛ք վերադառնանք մայրիկի օրինակին, ով շտապում էր քաղաքում՝ իր փոքրիկ տղային իր հետևից քարշ տալով: Իր երեխայի տկա-

րությունը իր պես արագ քայլել չկարողանալն էր: Ի՞նչ է նշանակում մոր համար վերցնել կամ կրել այդ երեխայի տկարությունը: Մոր համար սա նշանակում է սեփական քայլերը համապատասխանեցնել իր երեխայի քայլվածքին: Իր ուժն օգտագործելու փոխարեն նա պետք է զոհաբերի սեփական նպատակը և դանդաղեցնի իր արագությունը, որպեսզի կարողանա քայլել երեխայի հետ:

Ինչպե՞ս է սա գործում եկեղեցական կյանքում: Սա նշանակում է, որ ուժեղ քրիստոնյաները չպետք է շփոթեցնեն կամ հուսահատեցնեն տկար քրիստոնյաներին՝ իրենց տեսակետներն ու սկզբունքները պարտադրելով նրանց: Եթե Աստծո առջև համոզված եք, որ ճիշտ եք ինչ-որ հարցում, սակայն ձեր համոզմունքը պարտադրելը թերևս խանգարի տկար քրիստոնյայի քրիստոնեական կյանքին, ուրեմն մի՛ փորձեք նմանվել այդ մայրիկին ու մի՛ ստիպեք ձեզանից երիտասարդին ձեր արագությամբ ճանապարհորդել: Հակառակ դեպքում դուք կվնասեք նրանց:

Արդյոք կարո՞ղ եք տեսնել խնդիրը: Եթե ուժեղ քրիստոնյաներն իրենք իրենց սահմանափակեն նույն սահմանափակումներով, որոնցով առաջնորդվում են տկար քրիստոնյաները, ապա դա կնշանակի, որ տկար քրիստոնյաներին միշտ տրված է վերջին խոսքը ասելը՝ ինչն է կարելի և ինչը՝ ոչ: Այդ ժամանակ եկեղեցին կնմանվի շարասյան, որը միշտ շարժվում է ամենացածր արագությամբ: Արդյոք այդպես ճի՞շտ է: Եկեղեցին որոշում է փոխել իր ծառայությունների ձևաչափը, որպեսզի համապատասխանեցնի այն մարդկանց ապրելակերպին, որոնց ծառայում է, որպեսզի ավելի շատ մարդիկ կարողանան մասնակցել պաշտամունքներին: Բայց մի քրիստոնյա կարող է ասել. «Ես չեմ կարծում, որ Աստված ուզում է, որ մենք այլ կերպ անենք, քան այն, ինչ եղել է վերջին 50 տարիների ընթացքում»: Արդյո՞ք սա նշանակում է, որ ամբողջ եկեղեցին պետք է հարգի և սահմանափակվի այդ մեկ տկար քրիստոնյայի տեսակետով: Տարակուսելի խնդիրները լուծելու Քրիստոսի ուղին հետևյալն էր. «Սերը ի՞նչ է պահանջում»: Սերը չի պահանջում, որ ուժեղ քրիստոնյաները տկար քրիստոնյաներին ուրախ պահեն և միշտ նրանց ուզածները կատարեն: Սերը շատ ավելի բարձր նպատակ ունի, քան պարզապես մարդկանց ուրախ պահելը: «Մեզնից ամեն մեկը թող մտածի իր դրացու բարի-

քի մասին՝ ի նպաստ նրա հոգևոր շինության» (հմր 2): Եթե եկեղեցու ուժեղ հավատացյալները մտածեն, որ Աստված իրենցից պահանջում է ուրախ պահել տկար հավատացյալներին՝ ենթարկվելով նրանց քմահաճույքներին, ապա արդյոք սա օգուտ կբերի՞ և կօգնի՞ նրանց՝ Քրիստոսի մեջ աճելու:

Ուրախություն կա Քրիստոսով աճելու մեջ, իսկ աճը նշանակում է այնպիսի բաներ անել, որոնք առաջ չէիք անում: Տկար քրիստոնյաները պետք է սովորեն աճել: Իրական հոգևոր ուսուցումը հաճախ դժվար ու ցավոտ է: Այն ներառում է երկարատև մտավոր կարգապահություն և վարքագծի շարունակական փոփոխություն: Այն նաև պահանջում է ձերբազատվել այն սիրված տեսակետներից, որոնք երբ պահվում են լույսի ներքո, պարզվում է՝ պարզապես նախապաշարումներ են: Սկիզբում սա կարող է տարօրինակ թվալ, բայց բնական է: Այդպես է աճը: Եթե չափազանց հարմարավետ, բնական կամ շատ հեշտ է, ուրեմն չենք աճում:

Հիշո՞ւմ եք այդ մայրիկին. նա ամբողջ կյանքում իր տղայի քայլով չէր քայլելու, նա պետք է դանդաղ քայլեր նրա հետ այնքան ժամանակ, որքան կպահանջվեր՝ հույս ունենալով, որ մի օր տղան հասուն մարդու պես է քայլելու:

Քրիստոսը հանդիպեց և ընդունեց տկարներին իրենց տկարության մեջ, բայց նրանց այնտեղ չթողեց: Նա առաջնորդեց նրանց դեպի փրկություն և իշխանություն: Սա կյանքի հիմնարար սկզբունք է:

Դուք երբեք չեք կարող փոխել դիմացինին, բայց կարող եք օգնել մեկ ուրիշին, երբ նա Աստծո օգնությամբ ձգտում է փոխել ինքնիրեն:

Տարօրինակ է, սակայն ճշմարտություն է, որ մեկ ուրիշին անվերապահորեն ընդունելը փոփոխությունների գործընթացի առաջին քայլն է: Երբ անձն ինքնիրեն ընդունված է զգում այնպիսին, ինչպիսին կա, այնպիսի մթնոլորտ է ստեղծվում, որտեղ կարող է փոփոխություն տեղի ունենալ: Աստված արդեն խորհրդավոր կերպով աշխատում է այդ մարդու կյանքում: Հարցն այն է. «Ինչպե՞ս կարող եմ համագործակցել Աստծո հետ այն ամենի մեջ, ինչ Նա արդեն սկսել է, որպեսզի օգնեմ՝ կառուցելու այդ մարդուն»:

Ռեքս Տիրլավ

# «Մի՞թե Աստծո մոտ անարդարություն կա»

## Հռոմ. 9:14

Ուսումնասիրելով թերթը՝ ես պատահաբար հանդիպեցի մահախոսականի, որի բովանդակությունն ապշեցրեց ինձ. «Իմ ընկերը և աշխատակիցը… մահացավ սարսափելի և անարժան մահով: Ի՜նչ անարդար ճակատագիր: Չեմ կարող շնորհակալություն հայտնել Աստծուն դրա համար»: Հաշվի առնելով թերթի ընտրությունը՝ այս ամենը գրող մարդը բավականին կրթված էր:

Ինքնաբերաբար մտքիս ուշադրությունը կենտրոնացավ այն մահապատժի վրա, որը տեղի էր ունեցել Երուսաղեմում մոտավորապես 2000 տարի առաջ: Գողգոթայի վրա երեք խաչյալներ կրում էին անկարագրելի չարչարանքներ: Նրանցից երկուսը ավազակ էին, իսկ երրորդը, որ մեջտեղում էր, անմեղ էր: Ավելին, ինչպես վկայում է Աստվածաշունչը, Հիսուս Քրիստոսը, որի մասին հիմա կարդում եք, միակ արդարն էր:

Ավազակներից մեկը ընդունեց Նրան՝ որպես հեզ ու համբերատար չարչարվող խոստացյալ Մեսիայի, «Աստծո գառան»: Դա փոխեց նրա վերաբերմունքը Հիսուսի հանդեպ, և նա բացականչեց. «Մենք իրավացի ենք պատժվում, քանի որ մեր կատարած գործերի հատուցումն ենք ստանում, իսկ այս մարդը ոչ մի վատ բան չի արել» (Ղուկ. 23:41):

Անարժան մահ, անարդար ճակատագիր… Մենք չենք կարող օգտագործել այս արտահայտությունները՝ դրանք վերագրելով Աստծո Որդուն: Նա չարչարվեց, որպեսզի ազատի մեղավորներին դժոխքում հավիտենական չարչարանքից:

Ի՜նչ ուրախություն ունեն նրանք, ովքեր հավատքի միջոցով կարող են ասել. «Որովհետև Քրիստոսը նույնպես մեկ անգամ չարչարվեց մեղքի համար, Արդարը՝ անարդարների համար, որպեսզի մեզ բերի Աստծուն» (Ա Պետ. 1:18):

Քաղված

# Փողերի դատաստանները (3)

## 5. Հրեշտակը հնչեցնում է յոթերորդ փողը (11:15-19)

7-րդ փողի հնչեցումը Երկնքում ուղեկցվում է երկրպագության, գովասանքի և գոհության աղոթքներով, քանի որ նրանք գիտակցում են, որ այս փողի հնչյունը մատնանշում է, որ վերջը մոտ է. վերջին դատաստանները կհաջորդեն արագ հաջորդականությամբ: Այն ամենը, ինչ հակառակվում է Աստծուն, շուտով պարտության է մատնվելու, և Տեր Հիսուսը նստելու է Իր երկրային գահին՝ ազգերի վրա 1000 տարի թագավորելու համար: «Այս աշխարհի թագավորությունները դարձան մեր Տիրոջն ու Նրա Օծյալինը, և Նա թագավորելու է հավիտյանս հավիտենից» (Հայտ. 11:15): Այնուհետև 24 երեցներն ընկնում են երեսի վրա ու երկրպագում Աստծուն (Հայտ. 11:16-18):

Այնուհետև Հովհաննեսը տեսավ երկնային տաճարի ամենասուրբ վայրը, որտեղ գտնվում էր Ուխտի տապանակը: Երկրային Խորանում տարին մեկ անգամ՝ քավության օրը, քահանայապետը արյունով ներս էր մտնում ներքին սրբավայր, որը ցողում էր քավության վրա: Սա այսպես է կոչված, քանի որ արյունը բավարարում էր Աստծո դատաստանը՝ մարդկանց մեղքերի համար: Երկնային տաճարի այս տեսարանը ցույց է տալիս, որ դեպի Աստված տանող ճանապարհը դեռևս հասանելի է նրանց համար, ովքեր պատրաստ են վստահելու Տեր Հիսուսին:

Գլուխն ավարտվում է փայլակներով, ձայներով, որոտումներով, երկրաշարժով և խոշոր կարկուտով: Այս բոլորը նախազգուշացնում են երկրի վրա բռնկվող վերջնական դատաստանի մասին:

## 6. Կինն ու Վիշապը (12:1 - 13:1)

Սա ամենաուշագրավ հատվածներից մեկն է, որովհետև դրանում նախանշված են որոշ մեծ իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել և տեղի են ունենալու Երկնքում ու երկրի վրա մինչև Մեծ նեղության ժամանակաշրջան մտնելը: Գլխավոր դերակատարները (կամ գործակալները) հետևյալներն են.

1. Իսրայել ազգը (արևը հագած կինը)
2. Առաջին վիշապը, որ կոչվում է բանսարկու և սատանա (մեծ կարմիր վիշապը)
3. Քրիստոս Մեսիան (Որդին, արու զավակը)
4. Միքայելը և նրա հրեշտակները

Երբ Հովսեփը՝ Հակոբի որդիներից մեկը, ընդամենը 17 տարեկան էր, նա երկու երազ տեսավ: Առաջինը կատարվեց Եգիպտոսում, իսկ երկրորդը դեռ պետք է կատարվի: Հովսեփն իր եղբայրներին ասաց. «Ահա մի երազ էլ տեսա, և ահա արեգակը, լուսինը և տասնմեկ աստղեր ինձ երկրպագում էին» (Ծննդ. 37:9): Արևը ներկայացնում էր Հակոբին, լուսինը՝ Ռաքելին՝ Հովսեփի մորը, իսկ տասնմեկ աստղերը՝ Հովսեփի եղբայրներին: Ուստի մենք կարող ենք եզրակացնել, որ Հայտ. 12:1-ի կինը, որի նկարագրության մեջ մտնում են արևը, լուսինն ու աստղերը, իրականում ներկայացնում է իսրայելացիներին: Ավելին, հենց Իսրայելի միջոցով է ծնվել Մեսիան (տե՛ս Հռոմ. 9:5, Եբր. 7:14), և Նրա մասին ասվում է, որ Նա ղեկավարելու է ազգերին երկաթե գավազանով (Սաղ. 2:9, Հայտ. 12:5, 19:15): Ուստի Որդին՝ արու զավակը, որը ծնվել է կնոջից, հստակորեն վերաբերում է Մեսիային, որը գալիս է Հուդայի տոհմից:

Վիշապի ինքնությունը ճշգրիտ բացահայտված է Հայտ. 12:9-ում, որտեղ նա անվանվում է «առաջին օձը, որ կոչվում է բանսարկու և սատանա»: Այս բառերը ճշգրտորեն կրկնվում են Հայտ. 20:2-ում:

Միքայելը մեծ հրեշտակապետն է, որի հիմնական գործառույթը, թվում է, Իսրայել ազգի պահպանությունն ու պաշտպանությունն է: Նա հիշատակվում է Դան. 10:13-ում, 12:1-ում, Հուդա 9-ում, և այստեղ՝ Հայտ. 12:7-ում: Դան. 12:1-ը հատուկ վերաբերում է Մեծ նեղությանը: Ա Թես. 4:16-ը նույնպես Միքայելին է վերաբերում, քանի որ կա միայն մեկ հրեշտակապետ:

Հայտ.12-րդ և այլ գլուխներից սովորում ենք, որ սատանան ակտիվ էր Տեր Հիսուսի ծննդյան պահին. «Եվ վիշապը կանգնել էր այն կնոջ առջև, որ ծննդաբերելու վրա էր, որպեսզի հենց որ ծնի, կուլ տա նրա զավակին» (Հայտ. 12:4): Բայց ակնհայտ է, որ սատանային չհաջող-

վեց դա: Հաջորդը նա գործեց Հերովդես թագավորի միջոցով, ով «զայրացավ և մարդիկ ուղարկեց և կոտորեց Բեթլեհեմում և նրա շրջակայքում գտնվող բոլոր մանուկներին, որոնք երկու և դրանից պակաս տարիք ունեին» (Մատթ. 2:16)՝ համոզված լինելով, որ Տեր Հիսուսը, անշուշտ, սպանվածների մեջ կլինի: Բայց դարձյալ սատանան չհաղթեց: Աստծո պատվերի համաձայն՝ Հովսեփը երեխային և Նրա մորը տարավ Եգիպտոս (տե՛ս Մատթ. 2:13-14-ը): Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Մեսիայի վերաբերյալ Աստծո խոստումներին որևէ կերպ հնարավոր չէր միջամտել:

Ինչպես հաճախ է պատահում Հին Կտակարանի մարգարեություններում, այնպես էլ այստեղ՝ Հայտ. 12:5-ում, հողում է կատարվում Տեր Հիսուսի ծնունդին, այնուհետև երկրի վրա Նրա տիրակալությանը: Սա այն էր, ինչ ոմանք կարծում էին, որ տեղի կունենա Տեր Հիսուսի երկրային կյանքի ընթացքում (տե՛ս Մատթ. 20:20-28, Ղուկ. 19:37-38): Բայց բացարձակապես անհրաժեշտ էր, որ Նա սկզբում տառապեր խաչի վրա, որպեսզի ապահովեր մեղքերի մաքրումը, այնուհետև փառավորվեր և նստեր երկնքում՝ Մեծության աջ կողմում (Եբր. 1:3, Ա Պետ. 1:11):

Տեր Հիսուսն Իր գործը երկրի վրա ավարտելուց հետո «համբարձվեց, և մի ամպ Նրան ծածկեց նրանց աչքից» (Գործք 1:9), կամ, ինչպես հատուկ կերպով նկարագրված է Հայտ. 12:5-ում, «Զավակը հափշտակվեց Աստծո մոտ և Նրա գահի մոտ»: Իսկ ինչ վերաբերում է Իսրայել ազգին առնչվող Աստծո նպատակներին, Տեր Հիսուսը դեռ նստած է Աստծո գահին և այնտեղ կմնա մինչև Երկիր վերադառնալը՝ Մեծ նեղության ավարտին (հմմտ. Սաղ. 110:1):

Հաջորդիվ՝ Հովհաննեսը տեղափոխում է մեզ Մեծ նեղության ժամանակաշրջանի կեսերին, երբ կինը՝ Իսրայել ազգի ճշմարիտ հավատացյալները, բայց ոչ ամբողջ ազգը (հմմտ. Հայտ. 12:17) «փախավ անապատ, որտեղ Աստծո կողմից նրա համար տեղ էր պատրաստված, որտեղ նա կերակրվելու էր հազար երկու հարյուր վաթսուն օր» (Հայտ. 12:6): Անկասկած, այս մարդիկ կհիշեն Հիսուսի ասածը. «Հրեաստանում եղողները թող լեռները փախչեն» (Մատթ. 24:15-17):

Միևնույն ժամանակ լինելու է բուռն պայքար Երկնքում Միքայելի և նրա հրեշտակների ու վիշապի, այսինքն՝ սատանայի և նրա հրեշտակների միջև: Միքայելը և նրա հրեշտակները հաղթելու են, և սատանան ու նրա հրեշտակները գցվելու են երկիր: Պետք է նշենք, որ մինչև այս մարտի տեղի ունենալը սատանան կշարունակի լինել «օդի իշխանության իշխան» (Եփես. 2:2) և հասանելի լինել Աստծուն՝ մարդկանց մեղադրելով Աստծո առջև (Հայտ. 12:10, հմմտ. Հոբ 1:6-12): Բայց երբ նրան գցեն երկիր, նրան այլևս թույլ չեն տա մուտք գործել Երկինք:

Սատանայի վայր ընկնելը Երկնքում մեծ ցնծության առիթ կդառնա (Հայտ. 12:10, 12)՝ իմանալով, որ մեծ հակառակորդն ու բանսարկուն վերջապես դուրս է շպրտվել: Բայց երբ նա գիտակցի իր պարտությունը, իր կատաղությունը կթափի կնոջ վրա (Հայտ. 12:13): Գրված է, որ երբ նրան մեծ արծվի թևերով տանում են անապատի անվտանգ վայր, նա գետի պես դուրս է նետում բերանից ջուրը՝ փորձելով նրան խեղդել: Բայց երկիրը բացվում է և ընդունում ջուրը: Զայրույթով լցված՝ նա սկսում է պայքարել մնացած իսրայելացիների դեմ: Բայց այս ամենից առաջ նա պետք է հզորացնի աշխարհի գերագույն տիրակալին և իր նմանին՝ օգնելու նրան՝ իրականացնելու իր չար մտադրությունները:

QMBC պանորամա

(Շարունակելի)

---

«Օրհնի՛ր ՏԻՐՈՋԸ, ո՛վ իմ անձ, ու այն ամենը,
որ իմ ներսում է՝ Նրա սուրբ անունը:
Օրհնի՛ր ՏԻՐՈՋԸ, ո՛վ իմ անձ,
ու մի՛ մոռանա Նրա բոլոր բարերարությունները,
Ով ներում է քո բոլոր անօրենությունները,
Ով բժշկում է քո բոլոր ախտերը,
Ով փրկագնում է կյանքդ ապականությունից,
և քեզ ողորմությամբ ու գթությամբ պսակում.
Ով կշտացնում է սիրտդ բարությամբ այնպես,
որ երիտասարդությունդ արծվի պես նորոգվում է»:

**Սաղմոս 103:1-5**

# Ինչո՞ւ

Վերջերս գրություն կարդացի Հնդկաստանի վիրուսի վերաբերյալ: Հեղինակը այս հարցն էր բարձրացրել. «Ինչո՞ւ Աստված մեզ հետ այդպես վարվեց»: Այս հարցը հաճախ դժվար ժամանակներում ենք տալիս: Անկասկած, նման վիճակներով ենք անցնում, կամ ավելի ճիշտ՝ ճանապարհի սկզբում ենք, գուցեև ավելի դժվար ժամանակներ գան:

Արևմուտքում Աստծուն հավատալը շատերի կողմից դիտվում է որպես անհարկի և նույնիսկ վնասակար: Այն համարվում է տկարամիտների համար փխրուն հենակ, հպարտության և մոլեռանդության արդարացում կամ պարզապես մանկական ձանձրալի երազանք, իրականությանը առերեսվել չցանկացող մարդկանց զբաղմունք: Միշտ այդպես չի եղել: Ընդամենը մեկ սերնդի ընթացքում մշակութային արմատական փոփոխություն տեղի ունեցավ: Արդյունքում՝ անվանական քրիստոնյաները կամ մշակութային հավատք ունեցողները առանձնացան նրանցից, ովքեր գիտակցությամբ և վստահությամբ շարունակում են երկինքն ու երկիրը ստեղծող Աստծո հանդեպ հավատք դրսևորել:

Արդյոք հաստատուն և համարձակ հավատքը խելամիտ և հնարավո՞ր է մեր օրերում: Իհարկե, բայց միայն այն ժամանակ, երբ այն ունի նյութ և խարսխված է անսասան ճշմարտության վրա: Երբ դըժվար ժամանակները գան, զգացումները և ցանկությունները քամուց քշված չոր տերևների պես կհեռացվեն, տաք արևի տակ ցողի պես կգոլորշիանան:

Հզոր հավատքի ու անսասան ճշմարտության հիմքը Հիսուս Քրիստոսի խաչն է: Ինչո՞ւ: Քանի որ այդ մեկ արտասովոր պատմական իրադարձության մեջ մարդը և Աստված երևում են այնպիսին, ինչպիսին կան:

Մարդկությունը արժանի չէ Աստծո անսպառ սիրուն ու օրհնությանը: Հիսուսի խաչը մեզ ցույց է տալիս, թե ովքեր ենք մենք և ինչի ենք արժանի: Նա, ով կատարյալ բարի էր, ով խոսեց միայն ճշմար-

տությունը, ով փափագում էր մեզ ազատագրել մեղքից, մատնվեց և դաժանորեն սպանվեց: Քիչ մարդիկ հավատացին Նրան, շատերը թողեցին, հասարակ ժողովուրդը աղաղակեց ու պահանջեց Նրա մահը: Մարդկային փորձառությունը ողջ աշխարհի և ողջ պատմության մեջ եղել և մնում է մեղանչելը: Մենք տառապում ենք ուրիշների մեղքի պատճառով, և ուրիշներին չարչարում ենք մեր մեջ եղած մեղքի պատճառով:

Բայց խաչը միայն մարդկային մեղքի պատմությունը չէ, այն նաև Աստծո մեծ սիրո դրսևորումը: Տեր Հիսուսը մեր մեքերի պատճառով Աստծո դատաստանի պատիժը պատրաստակամորեն կրեց ու մահացավ: Նա մեր մահով մահացավ. Նա մահանալու պատճառ չուներ: Ոչ թե գամերը Նրան թողեցին խաչի վրա, այլ սերը:

Գուցե հարցնում ես. «Ինչո՞ւ Աստված մեզ հետ այդպես վարվեց»: Որպեսզի մեզ զգուշացնի, որպեսզի մեզ արթնացնի ու մեր հոգևոր կարիքի վրա մեր ուշադրությունը հրավիրի, որպեսզի մեզ առաջնորդի, Իր ներմանը ուղղորդի, մեր ապստամբ ու ապականած վիճակներից փրկի: Մեր փորձառածը Նրա ողորմությունն է և ոչ թե բարկությունը:

«Ով իմաստուն է և պահում է այս բաները, Նա հասկանալու է Տիրոջ գթասիրությունը» (Սաղ. 107:43):

Նեյլ Բուքման

❊ ❊ ❊

«Ուրեմն, ամենայն ջանք գործադրելով՝ ձեր հավատին առաքինություն ավելացրեք ու առաքինությանը՝ գիտություն, և գիտությանը՝ ժուժկալություն ու ժուժկալությանը՝ համբերություն և համբերությանը՝ աստվածապաշտություն ու աստվածապաշտությանը՝ եղբայրասիրություն ու եղբայրասիրությանը՝ սեր: Եթե այս բաները ձեր մեջ լինեն ու աճեն, դրանք ձեզ դատարկ ու անպտուղ չեն թողնի մեր Տեր Հիսուս Քրիստոսին ճանաչելու մեջ: Իսկ նա, ում մեջ այս բաները չկան, կույր ու կարճատես է և մոռացել է իր նախկին մեղքերից մաքրվելը»:

**Ա Պետ. 1:5-9**

# Եվս մեկ տարի

## Ղուկ. 13:1-9

Ամեն տարվա ավարտը սկիզբն է մեկ այլ տարվա: Շատերի համար տարվա ավարտը կյանքի քննություն է: Այդ պահերին հիշում ենք մեր ձախողումները, դասեր քաղում դրանից ու հետո նորից մոռանում: Ինչպես Պողոսն է ասում. «Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. հետևի բաները մոռանալով՝ առջևում եղողներին եմ նկրտում (ձգտում): Հետևում եմ դեպի նպատակը...» (Փիլիպ. 3:13-14):

Մեր ձախողումների մասին հիշելիս մենք պետք է ազնիվ ու գիտակից լինենք, պետք է մտածենք, թե որքան ենք Տիրոջ համար արգասաբեր եղել:

Թզենու առակի մեջ երեք բան կա, որ պետք է մտապահենք: Նախևառաջ պետք է այդ առակը կիրառենք մեր քրիստոնեական կյանքում: Թզենու այգու տերը Հայր Աստվածն է, այգեպանը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, իսկ պտղատու ծառերը մենք ենք՝ Քրիստոսի հետևորդներս:

Արդյո՞ք մեր կյանքի գարուններին պտուղ ենք տվել Տիրոջը, թե՞ վատնել ենք մեր երիտասարդության ոսկե տարիները: Արդյո՞ք պատանի հասակում Աստծուն ենք տվել մեր անդրանիկ ու լավագույն ուժը, թե՞ թույլ ենք տվել, որ մեղքը սպառի մեզ: Միջին տարիքում մի՞թե շարունակում ենք թույլ տալ, որ աշխարհիկ արժեքները կլանեն մեր տարիները: Արդյո՞ք մենք օրացույցով արդեն կես դար ապրել ենք, բայց դեռ հոգևոր մանուկներ ենք: Այս հարցերը պետք է տանք ինքներս մեզ ու անկեղծ պատասխանենք՝քննելով մեր կյանքը:

Այնուհետև մենք պետք է հաշվի առնենք Հիսուսի խոսքերը՝ հիշելով, որ նա Հոր՝ Աստծո առջև բարեխոսում է մեզ համար. «Տե՛ր, մեկ տարի էլ ինձ տո՛ւր, ու ես կփորեմ և պտուղ կբերեմ»:

Այստեղ տեսնո՞ւմ եք Աստծո ողորմածությունը: Որքա՞ն հաճախ է նա մեզ հնարավորություն տվել: Մենք այս տարին պետք է համարենք

Աստծո անսահման շնորհի ժամանակաշրջան: Ժամանակն Աստծունն է, և նրա ողորմածությունն է, որ կասեցնում է «արդարության կացնի» հարվածը: Մի՞թե ուզում ենք վիրավորել Աստծո ողորմածությունը՝ այս տարի մեր ունեցած լավագույնը նրան չտալով:

Երրորդ՝ այստեղ խոսվում է Աստծո շնորհի և համբերության սահմանների մասին: Այգեպանը խնդրել էր մեկ տարով հետաձգել: Եթե անգամ հայցողը Հիսուսն է, նույնիսկ այդ դեպքում ողորմածության խնդրանքը սահմաններ ունի:

Եկեք ինքներս մեզ հարց տանք. «Արդյո՞ք սա մեր կյանքի վերջին տարին է, և մի՞թե մենք պատրաստ ենք Տեր Հիսուսին դիմավորելու»:

Մեզանից ոմանք ընկերներ և ընտանիքի անդամներ ունեին, որոնց համար այս տարին վերջին տարին էր: Այս առակը պետք է սթափեցնի այն քրիստոնյային, ով Տիրոջը չի տալիս իր լավագույնը: Հիմա է մեր Տիրոջ պատվիրանները պահելու ժամանակը, որովհետև չգիտենք, թե վաղն ինչ է լինելու:

«Մի՛ պարծենա վաղվա օրով, որովհետև չգիտես, թե օրն ինչ կծնի» (Առակ. 27:1):

Մեր այգեպանը՝ Հիսուսը, Աստծո Սուրբ Խոսքով մշակում ու բեղմնավոր է դարձնում, ուրեմն եկեք այս տարի պտուղ տանք Նրա համար:

Վեր. Հովսեփ Հովսեփյան

---

«Ամեն բան փորձեցե՛ք և բարին ամո՛ր բռնեցեք: Չարի ամեն մի երևույթից հեռու՛ մնացեք: Եվ Խաղաղության Աստվածն Ինքը թող ձեզ բոլորովին սրբացնի. և ձեր հոգին, անձն ու մարմինն ամբողջապես անարատ պահի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը: Հավատարիմ է Նա, որ ձեզ կանչեց, ու Ինքն էլ պիտի կատարի այն»:

**Ա Թես. 5:21-24**

# Հարուստ մեռնել ցանկացող նավաստին

Տարիներ առաջ բրիտանական մի նավ իսպանական ոսկի էր փոխադրում խիստ հսկողության տակ:

Ճամփորդությունը հաջող էր, նավի անձնակազմը՝ շատ ուրախ: Սակայն մի օր նավը, հսկայական ժայռի բախվելով, ծակվեց և իսկույն սկսեց ջրով լցվել: Այսպիսի պարագաներում, բնական է, շփոթություն և իրարանցում է լինում: Վտանգված նավը փրկելու ամեն միջոց ապարդյուն անցավ, բայց նրանք չմոռացան արժեքավոր ոսկու տակառները վերև հանել: Բոլորը հանեցին ու տախտակամածի վրա դասավորեցին՝ դրանք փրկելու մեծ հույսով: Սակայն նավը աստիճանաբար ջրով էր լցվում: Ազատության ամեն հույս կարծես սպառվել էր, ուստի փրկարար նավակներ իջեցրին՝ մարդկանց փրկելու ծովում խեղդվելուց:

Հսկողության տակ պահվող ոսկու տակառները այլևս արժեք չէին ներկայացնում: Այդ պահին նրանց կյանքն ամեն բանից ավելի արժեքավոր էր դարձել: Բոլոր նավակները լցվեցին մարդկանցով: Երբ վերջին նավակը ծով էին իջեցնում, երիտասարդ նավապետ սպան նավակ մտնելուց առաջ մի պահ կանգնեց, քննական ակնարկ նետեց՝ վստահ լինելու համար, որ ոչ ոք չի մնացել այնտեղ՝ իբրև պարտականություն և իր պաշտոնին հավատարմություն: Բայց ի՜նչ զարմանք: Նա տեսավ մեկին՝ տախտակամածի վրա նստած: Այս մարդը հանդարտորեն մուրճով բացում էր ոսկու տակառները և իր շուրջն էր դիզում դեղին մետաղները:

- Ի՞նչ ես անում, ո՛վ մարդ, - բղավեց սպան բարձր ձայնով, - ինչի՞ մասին ես մտածում: Չե՞ս տեսնում, որ նավը շուտով թաղվելու է ջրի մեջ:

- Ինչ ուզում է, թող լինի, - ասաց մարդը, - իմ նավի խորտակումն իմ մտահոգությունը չէ: Ես կյանքիս ամբողջ ընթացքում աղքատ եմ ապրել, բայց հիմա որոշել եմ հարուստ մեռնել, - պատասխանեց անմիտ մարդը:

Սպան իր բոլոր ջանքերը ի գործ դրեց՝ մարդուն համոզելու, որ նավակ մտնի, բայց անօգուտ էր: Նա իր որոշման մեջ անդրդվելի մնաց ու շարունակեց իր աշխատանքը: Ազնիվ սպան տեսավ, որ չի կարող խոսք հասկացնել համառ մարդուն, թողնելով նրան իր բախտին՝ իջավ փրկարար նավակի մեջ ու հեռացավ նավից: Հեռվից նրանք կարողացան տեսնել, թե նա ինչպես էր շարունակում իր հիմար աշխատանքը՝ ոսկու կույտերում նստած: Փրկարար նավակները բավական հեռացել էին, և այլևս չէր երևում ո՛չ նավը, ո՛չ մարդը, ո՛չ էլ ոսկու տակառները: Ամբողջը թաղվեց ջրի մեջ:

Սիրելի՛ ընթերցող, տեսնո՞ւմ ես, թե այս անմիտ նավաստին ինչ մեծ հիմարություն գործեց: Անօգուտ հարստության խաբեությամբ տարվելով՝ իր ազատությունը, իր փրկությունը մերժեց: Նախընտրեց մի պահ հարուստ լինել, կորչող ոսկիներում մնալ և ապա հավիտյան կորավ դրանց հետ և դրանց համար: Սա է մարդկանց մեծամասնության պատկերը: Ոմանք աշխարհի հաճույքների ու մեղքի զվարճության ետևից վազելով, ոմանք էլ հարստության խաբեությամբ տարվելով՝ մոռանում են իրենց հավիտենական կյանքը, մոռանում են իրենց մեծ փրկությունը, մերժում են խաչյալ և հարուցյալ Քրիստոսին, որ թողություն, փրկություն և խաղաղություն է տալիս բոլոր Իր մոտ եկողներին:

Պատվակա՛ն հոգի, դու հիմա կարդում ես այս տողերը: Չլինի այնպես, որ այս մեծ փրկությունը մերժողներից մեկը լինես: Չլինի այնպես, որ աշխարհի կախարդիչ բաների հետևից վազելով՝ քեզ համար մեռած Հիսուս Քրիստոսին և Նրա ձրի փրկությունը ոտնակոխ անես ու հավիտյան կորչես:

Քաղված՝ «Զմայլելի դրվագներ» գրքից

---

«Որովհետև շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարգևն է. ո՛չ թե գործերից, որպեսզի ոչ մեկը չպարծենա: Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոս Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք»:

**Եփես. 2:8-10**

# Տե՛ր, Դու ամեն բան գիտես

## Սաղ. 139:1-6

Արդը նման է լուսնին. ունի և՛ լուսավոր կողմ, և՛ խավար կողմ: Որքան էլ մարդկային հարաբերություններում փորձենք դրսևորել միայն մեր լուսավոր կողմը, միևնույնն է, մեր սրտի խորքում զգում ենք խավարի առկայությունը, դրա սառնությունը, անտարբերությունը, անձնասիրությունը... Իրականում միայն Աստված է լույս (Ա Հովհ. 1:5), Նա է կոչված լույսի Հայր (Հակ. 1:17):

Կյանքի մեծ փորձ ունեցող մարդիկ հաճախ այսպիսի խրատներ են տալիս կյանքի քիչ փորձ ունեցողներին.

- Մի՛ ասա այն, ինչ մտածում ես:
- Մի՛ հայտնիր քո ծրագրերը ուրիշներին:
- Ցույց մի՛ տուր քո բոլոր խաղաքարտերը:
- Ոչ ոքի հետ մի՛ կիսվիր քո հույզերով, զգացումներով:

Դեռևս մարդկային հարաբերություններում սրանք սկզբունքներ են, որոնք կամա թե ակամա կիրառվում են շատերի կողմից, բայց եթե փորձենք նույնն անել Աստծո հետ ունեցած մեր հարաբերություններում, կձախողվենք:

Սաղմոսերգիչը գիտակցել էր, որ անիմաստ է Աստծուց ինչ-որ բան թաքցնել: Ուստի ասաց. «Ո՛վ Տեր, ինձ քննեցիր ու ճանաչեցիր: Դու գիտես իմ նստելն ու ելնելը, իմ մտածածը հեռվից ես հասկանում: Իմ շավիղն ու պառկելն ես քննում ու ծանոթ ես իմ բոլոր ճամփաներին: Նախքան խոսքն իմ լեզվի վրա լինելը Դու ամբողջապես տեղյակ ես դրան, ո՛վ Տեր: Իմ հետևից ու առջևից պաշարել ես ինձ և Քո ձեռքն իմ վրա ես դրել: Այսպիսի գիտությունն ինձ համար խիստ զարմանալի է, բարձր է, ու չեմ կարող ըմբռնել այն»:

Աստծո հետ հարաբերվելիս ինչքան էլ չասես այն, ինչ մտածում ես, ինչքան էլ չհայտնես քո սրտի ծրագրերը, ինչքան էլ ցույց չտաս քո բոլոր խաղաքարտերը, ինչքան էլ չկիսվես քո հույզերով և զգա-

ցումներով, միևնույն է, Աստված բոլորը գիտի:

Գուցե մտածում ես, որ Աստված քեզ ծանր խաչ է տվել, անարդար է վարվել քեզ հետ, բայց համարձակություն չունես Նրան այդպես ասելու: Եվ թեև շնորհակալություն ես հայտնում, մտքում ուրիշ բան ես մտածում:

Աստծուց անհնար է ինչ-որ բան թաքցնել: Ի ապացույց սրան՝ 12-րդ համարն ասում է. «Այո, մութը չի ծածկվում Քեզանից, այլ գիշերը ցերեկի պես՝ փայլում է. մութն ու լույսը Քեզ համար միանման են»:

Եբրայեցիներին ուղղված նամակում հեղինակն ասում է. «Եվ չկա մի արարած, որ Նրա առջև հայտնի չլինի, այլ ամեն ինչ մերկ և բաց է Նրա աչքերի առջև, Ում մենք հաշիվ պիտի տանք» (Եբր. 4:13):

Դավիթն ասում է. «Դու գիտես իմ նստելն ու ելնելը»: Նստում ենք՝ ծրագրելու համար, ելնում ենք, կանգնում ենք՝ մեր ծրագրածը կատարելու համար:

«Իմ շավիղն ես... քննում». Աստված գիտի այն շավիղը, որը ծրագրել եմ ինձ համար:

«Պառկելն ես քննում». ենթադրում եմ, որ խոսքը խղճի մասին է, երբ ասում ենք. «Հանգիստ խղճով գլուխս բարձին դնեմ»: Երբ դնում ես գլուխդ բարձին, ու խիղճդ սկսում է խոսել, հիշի՛ր, որ Աստված դա էլ է քննում:

«Ծանոթ ես իմ բոլոր ճամփաներին»: Սա նման է Սիմոն Պետրոսի անկեղծ խոստովանությանը, երբ Տիրոջն ասաց. «Տե՛ր, Դու ամեն բան գիտես» (Հովհ. 21:17): Դավիթը, ավելորդ խոսքեր չգտնելով, ամփոփում է իր մտքերն ու ասում. «Տե՛ր, Դու ծանոթ ես իմ բոլոր ճամփաներին»:

Գիտնականներն ասում են, թե մարդու մտքով օրական 60,000 - 80,000 միտք է անցնում, միջին հաշվով՝ 2,500 - 3,000 միտք մեկ ժամում: Այս մտքերի մեծ մասը անպիտան են, նույնիսկ չենք էլ գիտակցում դրանց գոյությունը, սակայն Աստված այդ բոլոր մտքերի մասին տեղյակ է:

Դավիթը հասկացել էր, որ անհնար է Աստծուց թաքցնել մտքերը, զգացումները, ծրագրերը, խիղճը, ուստի Աստծուց հեռանալու փոխարեն նա ավելի անկեղծացավ ու աղոթեց՝ ասելով. «Քննի՛ր ինձ, ո՛վ Աստված և իմացի՛ր իմ սիրտը. փորձի՛ր ինձ ու իմացի՛ր իմ մտածումները և տե՛ս, թե արդյոք որևէ կորստյան տանող շարժառիթ կա՞ իմ մեջ, և ինձ հավիտենական ճանապարհով առաջնորդի՛ր» (Սաղ. 139:23-24):

Այս տարվա շեմին Աստծո մոտ գանք անկեղծ սրտով ու խնդրենք Նրան լուսավորել մեր սրտի ու մտքի խավար կողմերը, օգնել մեզ Իր հետ ունեցած հարաբերությունում լինելու Դավթի նման անկեղծ ու թափանցիկ: Այդ ժամանակ մարդկանց հետ նույնպես կլինենք անկեղծ և կարիք չենք ունենա ինչ-որ միտք թաքցնելու:

Վարդան Սարգիսյան

## Կարող ես քնել, երբ քամին փչում է

Տարիներ առաջ մի հողագործ ծովեզրին կալվածք ուներ: Նա հաճախ օգնական գտնելու վերաբերյալ հայտարարություն էր տեղադրում, սակայն ընդհանրապես մարդիկ չէին ուզում օվկիանոսի մոտակա հողաշերտերի վրա աշխատել: Նրանք խուսափում էին սարսափելի փոթորիկներից, որոնք քարուքանդ էին անում շրջակայքը և բերքը: Երբ հողագործը գործավորների հետ հանդիպում էր, նրանք միշտ մերժում էին առաջարկը: Վերջապես միջին տարիքի վտիտ, փոքրամարմին մի մարդ մոտեցավ հողատիրոջը:

Ագարակապանը հարցրեց նրան.

- Դու լա՞վ աշխատավոր ես արդյոք:

- Այո՛, ես կարող եմ քնել, երբ քամին փչում է, - պատասխանեց փոքրամարմին մարդը:

Թեև այս խոսքը չհասկացավ ճարահատ հողատերը, բայց վարձեց այս գործավորին: Մարդը շատ լավ էր աշխատում և արշալույսից մինչև արևամուտ զբաղված էր գործով: Գործատերը գոհ էր նրա աշխատանքից:

Բայց ահա մի գիշեր քամին սկսեց ահռելի կերպով ոռնալ ծովափին: Անկողնուց ցատկելով՝ հողատերը, կանթեղը ձեռքին, վազեց գործավորի սենյակ և նրան շտապ արթնացնելով՝ բղավեց.

- Ելի՛ր, մեծ փոթորիկ է մոտենում: Ամեն բան ամրացրո՛ւ, քանի դեռ քամին չի թռցրել դրանք:

Գործավորը անկողնու մեջ շրջվեց և վստահորեն ասաց.

- Ո՛չ, վարպե՛տ, քեզ ասել էի, որ կարող եմ քնել, երբ քամին փչում է:

Ստացած պատասխանից բարկացած՝ հողատերը անմիջապես նրա փոխարեն դուրս վազեց՝ փոթորկին պատրաստվելու: Սակայն զարմացավ, երբ տեսավ, որ հարդի բոլոր խրձերը ծածկված էին, կովերը գոմում էին, հավերը՝ հավաբնում ապահով, և ամեն բան ապահով էր: Ոչինչ չէր կարող թռչել քամուց: Այն ժամանակ գործատերը հասկացավ, թե ինչ էր ուզում ասել գործավորը, ուստի ինքն էլ անկողին վերադարձավ ու հանգիստ քնեց, մինչդեռ քամին փչում էր:

Երբ մենք հոգևորապես, ֆիզիկապես և մտովի պատրաստված ենք, վախենալու ոչինչ չունենք: Արդյոք դու կարո՞ղ ես քնել, երբ կյանքիդ մեջ փոթորիկ սկսվի: Այս պատմության գործավորը կարող էր հանգիստ քնել, որովհետև ագարակում ամեն բան նախօրոք ապահովել էր փոթորկի դեմ:

Մենք նույնպես կարող ենք կյանքի փոթորիկների դեմ մեզ ապահովել Աստծո Խոսքի մեջ հաստատվելով: Կարիք չկա ամեն բան հասկանալու. երբ Հիսուսի ձեռքը բռնենք, կկարողանանք փոթորկի ժամանակ խաղաղություն վայելել:

«Մարդուց վախենալը թակարդն է գցում, բայց ով Տիրոջն է ապավինում, ապահով կլինի» (Առակ. 29:25):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

# «ACM»-ի միսիոներական խումբը Հայաստանում

«ACM» մարդասիրական-բարեգործական հիմնադրամը հուլիսի 9-26-ը կազմեց միսիոներական խումբ, որի մեջ ընդգրկված էին Ռաֆֆի Չափարյանը, Սաքո Հարությունյանը, Անի Ավանեսյանը, Թալին Ավշարյանը ԱՄՆ-ից: Հայաստանում խմբին միացան կազմակերպության աշխատակիցները՝ Աստղիկ Մկրտումյանը Վանաձորից, Մարտուն և Անժելա Հարությունյանները Երևանից, Անի Հովհաննիսյանը Աբովյանից, Աշոտ և Հասմիկ Գյուրջյանները Գյումրիից և Հայկուհի Սիմոնյանը Մասիսից:

Գեղեցիկ և օրհնյալ երկու շաբաթ ունեցանք, որոնց մասին փափագում ենք կիսվել ձեզ հետ: Այս խմբի նպատակն էր «ACM»-ի խնամակալության տակ գտնվող կարիքավոր ընտանիքներին այցելել, բարեգործական ծրագրեր իրականացնել, ավետարանչություններ կազմակերպել թե՛ եկեղեցիներում և թե՛ ընտանիքներում: Ունեցանք նաև մանուկների համար ավետարանչական ծառայություններ Վանաձորում, Գյումրիում, Սևահողերում, Երևանում և Հովքում: Մեկօրյա մանկական ավետարանչական ծառայություններին մասնակցեցին շատ մանուկներ, որոնք լսեցին Ավետարանի պատգամը և նվերներ ստացան «ACM»-ի կողմից:

Տիրոջը փառք ենք տալիս մեր խմբի և պտղաբեր ծառայությունների համար: Նաև հատուկ շնորհակալություն ենք հայտնում Ռաֆֆի Չափարյան եղբորը, ով պատրաստ էր ամեն տեղ Աստծո Խոսքով ծառայելու բոլոր մարդկանց, որոնց հանդիպում էր: Խմբի բոլոր անդամները ծառայեցին միաբանությամբ և նվիրումով: Շնորհակալ ենք նաև «ACM» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդին՝ հանձին Հրաչ Գույուճյան եղբորը, ով խմբի համար կազմակերպեց գեղեցիկ այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր: Փառք ենք տալիս Աստծուն բոլոր եկեղեցիների համար, որոնք Աստծո գործի համար բացեցին իրենց դուռը «ACM» հիմնադրամի առջև:

Այցելեցինք նաև «CEF» և «Շողիկ» հիմնադրամների մանկական քրիստոնեական ճամբարներ: Մեծ օրհնություն էր տեսնել շատ մանուկներ, որոնք այս ճամբարների միջոցով լսում էին Ավետարանի պատգամը:

Ուրախ ենք, որ այս երկու շաբաթների ընթացքում շարունակեցինք իրար քաջալերել և օգնել, ձեռք բերեցինք նաև նոր ընկերներ:

Աստված օրհնի՛ «ACM» հիմնադրամին այս պտղաբեր և օրհնյալ գործունեության համար, և թո՛ղ փառավորվի մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր բոլոր զավակների միջոցով:

Խմբագրական